



*« ՄԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*

*ԹԵՄԱ*

*ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ  
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ  
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՆՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՄԻՋՈՑ*

*ԱՌԱՐԿԱ*

*Հայրոց լեզու և գրականություն*

*ՀԵՂԻՆԱԿ*

*Մեյքոնյան Տիրուհի*

*ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ*

*ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց*

*ՂԵՎԱՎԱՐ՝*

*Արմինե Ղազարյան*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	
3	
<b>Գլուխ.1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՆՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ</b>	
1.1 Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործականության զարգացման կարևորությունը հանրակրթական դպրոցում.....	
5	
1.2 Նախագծային ուսուցման դերը սովորողների կարողունակությունների զարգացման հարցում.....	11
1.3 Նախագծային աշխատանքի օրինակ «Գրականություն» առարկայի դասավանդման շրջանակներում.....	16
Եզրակացություններ.....	1
9	
Առաջարկություններ.....	2
0	
Օգտագործված գրականության ցանկ.....	21

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցողական առարկան, ամենակենդանի օրինակը աշակերտի համար հենց ինքը ուսուցիչն է»:  
**Ադուլֆ Դիստերվեգ**

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում կրթական համակարգում ակտիվ կերպով իրականացվում են բարեփոխումներ: Դա հիմնականում պայմանավորված է ժամանակի նոր մարտահրավերներով, որոնց առաջքում աննախադեպ գիտատեխնիկական առաջընթացն է, տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը: Որպեսզի բարեփոխումները դառնան կայուն իրականություն, դրա տերը պետք է լինեն պետության շահագրգիռ կողմերը: Բարեփոխումների առանցքում, անշուշտ, կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների մոտ հիմնարար գիտելիքների ամրակայումն է ու առավել կարևոր կարողությունների և հմտությունների ապահովումը:

Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը կրթական համակարգի շահագրգիռ կողմերին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների: Նոր կրթական պահանջների հիմքում դրված է այն առանցքային գաղափարը, որ դասավանդելն ու սովորելը պետք է հավասարապես փոխկապակցված լինեն, միայն այդ դեպքում սովորելը արդյունավետ դասավանդման արդյունք կհամարվի: Միայն դասավանդողի հետևողականության և սովորողի ջանասիրության դեպքում են լավագույն արդյունքներ գրանցվում:

Կրթական նոր պահանջների բավարարման համար մեծապես օգտավետ ենք համարում նախագծային ուսուցումը: Ուսուցման նախագծային մեթոդը կրթական մեթոդների ամբողջություն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Արդյունքը՝ տեսանելի,

ներկայանալի, հրապարակված աշխատանքն է: ԶԶ կրթական համակարգում այս մեթոդը նորությունն է, մինչդեռ նման ուսուցման տեսակն ունի բավականին կենսափորձ ու կիրառելիություն մի շարք երկրներում: Զանի որ նախագծային աշխատանքը սովորողին տալիս է համալիր գիտելիք, նոր կարողունակություններ, գործնական հմտություններ, կարծում ենք՝ ճիշտ որոշում է նման ուսուցման համատարած ներդրումը ԶԶ կրթական համակարգում:

Այսպիսով, կարծում ենք, որ ուսումնական առարկայի համար սահմանված կրթական չափորոշչային վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ է, որ ուսուցիչն ունենա համապատասխան մասնագիտական որակներ, տիրապետի նոր, զարգացում ապրող կրթական պահանջներին, բարձրացնի սովորողների հետաքրքրությունն առարկայի հանդեպ և կարևորի սովորողի դերը դասի ժամանակ:

Արդյունքում կունենանք իր որոշումների մեջ ինքնուրույն, կրթության և կյանքի այլ ասպեկտներում նախաձեռնող, կյանքի իրողություններին ստեղծագործաբար մոտեցող սերունդ: Ստացվում է, որ սովորողին պասիվ դաշտից ակտիվ դաշտ բերելով՝ հնարավորություն կունենանք սովորողին դարձնել դասի ընթացքի կենտրոնական սուբյեկտը, նա կդադարի հիմնականում լսողի իր դերում լինել, կսովորի, կսովորեցնի, կհետազոտի՝ ամրապնդելով մի շարք կենսական նշանակության հմտություններ ու կարողություններ ևս:

**Չեռագոտության թեմայի արդիականությունը:** Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու ունակությունները՝ ամեն կերպ խթանելով սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևրում, այդ թվում նախագծային աշխատանքի իրականացնելիս:

**Չեռագոտության նպատակը:** Ցույց տալ ուսուցչի և սովորողի արդյունավետ փոխգործակցության դերը վերջինիս մոտ մի շարք կենսական նշանակության կարողությունների ու հմտությունների զարգացման գործում:

**Չեռագոտության խնդիրը:** Չեռագոտության խնդիրն է կարևորել սովորողի դերը կրթական համակարգում՝ որպես նախաձեռնող, ինքնուրույն մտածող ու գործող, ուսումնական գրծընթացին ստեղծագործաբար մոտեցող սյուբեկտի:

**ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՈՐՊԵՍ  
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ,  
ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ  
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

**1.1 Ուսուցչի կողմից սովորողի ինքնուրույնության,  
Նախաձեռնողականության և ստեղծագործականության զարգացման  
կարևորությունը հանրակրթական դպրոցում**

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն: Ուստի կարևոր ենք համարում ուսումնական հաստատության ուսուցչի դերը կրթության որակի բարձրացման գործում, դրան ուղղված վերջինիս կողմից իրականացրած կառուցողական քայլերը և, որ ամենակարևորն է, փոխհամագործակցությունը սովորողի հետ՝ որպես կրթության առաջնային շահակից: Այս համատեքստում կարևոր ենք համարում ուսուցչի կողմից սովորողի ցանկացած նորորարական քայլերի խրախուսումը, վերջինիս ինքնուրույն գործելու պահանջմունքի բավարարումը:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Նախաձեռնողականության հետ սերտ կապված խրթին ուղին ունի մի շարք դրական կողմեր: Այն մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և

պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության գործունեության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

### **Ուսուցչի մասնագիտական որակներն են՝**

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն;
- կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն <sup>1</sup>:

### **Ուսուցչի անձնային որակներն են՝**

---

<sup>1</sup> Ա. Թովուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», էջ 13:

- սերը երեխաների նկատմամբ , համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;
- քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;
- մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն<sup>2</sup>:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ: Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին<sup>3</sup>:

Ստացվում է ուսուցչն իր մարդկային ու մասնագիտական բարձր որակներով, ժամանակակից մեթոդների կիրառությամբ, սովորողի տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող է հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջարդյունքների դրական ելքի: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի ուղղորդողի, խորհրդատուի:

Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի մյուս օղակը հենց սովորողն է՝ կրթական համակարգի առաջնային շահակիցը: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>3</sup> [https://www.moj.am/storage/uploads/00.Ardir\\_6.pdf](https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf) Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13:

գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Սակայն հատկանշական է, որ այս գիտակցումը հաճախ ժամանակավրեպ է դառնում, քանի որ կոնկրետ ժամանակահատվածում տեղի են ունենում լրջագույն բացթողումներ:

Այս պարագայում խնդիրը պետք է դիտարկել այլ հարթության վրա: Սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի: ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն<sup>4</sup>: Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրեն ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում ուսուցիչը: Անշուշտ, դժվար է համաձայնվել նմանօրինակ կարծիքների հետ, այդուհանդերձ սա ունի իր օբյեկտիվ պատճառները:

Հատկապես միջին և ավագ դպրոցի սովորողները, ովքեր այս կամ այն չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին, նոր տեխնոլոգիաներին, համացանցային տեղեկատվական հարթակներին, այլևս չեն բավարարվում դասարանային գիտելիքներով: Հենց նմանօրինակ խնդիրների լուծմամբ է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումը, նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում տեսաֆիլմերի դիտումն ու տեսասահիկների պատրաստումը: Նման համալիր միջոցառումներն ունակ են ամենաանտարբեր սովորողին բերել դեպի դասը:

Ստացվում է, որ ուսուցիչը կառավարելի է դարձնում սովորողի մուտքը համացանց՝ դա օգտագործելով ի շահ նրա: Արդյունքում՝ սովորողը կտրվում է զանազան անբովանդակ համացանցային հարթակներից՝ տեխնոլոգիան օգտագործելով տեղեկատվության հավաքագրման, ընթերցանության և այլ օգտակար նպատակներով: Նման նորորարական մոտեցումները հիմնականում արդյունավետ են աշխատում, քանի որ սովորողն ազատ ժամանակ ինքնուրույն է գործում, նախաձեռնում հետաքրքիր նախագծեր ու կիրառում դրանք: Սովորողի

<sup>4</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> ՀՀ Հանրակրթության մասին օրենք:



ինքնուրույնության և նախաձեռնողականության առաջխաղացումը մեծապես կարելի է կապել նաև նախագծային ուսուցման հետ:

Արդեն իսկ իրողությունն է, որ դասավանդման մի շարք հնարների կիրառումը ուսուցչին թույլ է տալիս կառավարելի դարձնել դասարանը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ, ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին: Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի՝ ավանդական և ժամանակակից: Ավանդական ենք անվանում զննական, բացատրական այն մեթոդներին, որոնց հիմքում ընկած է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի, հմտության, կարողության ձեռքբերում:

Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը: Առհասարակ ցանկացած փոխգործուն հնարի կիրառման ժամանակ սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով՝ մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները: Նմանօրինակ աշխատանքների ժամանակ աշակերտը սովորում է նաև օգտվել ՏՀՏ մի շարք գործիքներից: Դասին կիրառվող տարատեսակ փոխգործուն մեթոդների առկայությունը սովորողին օժտում է հետևյալ հմտություններով՝

- ինքնուրույնություն;
- կոլեկտիվ աշխատանքում սեփական ներուժը կիրառելու կարողություն;
- մեղիահմտությունների զարգացում;
- հետազոտելու, համացանցում որոնելու հմտություններ;
- թվային միջոցները գործածելու հմտություններ;
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում;
- ճաշակի զարգացում;
- անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:

Ինչպես արդեն նշել էինք՝ կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում

մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը: Կարծում ենք՝ կրթության ոլորտում առկա խնդիրների հաղթահարումը մեծապես կախված է նաև այն հանգամանքից, որ սովորողի ու ուսուցչի միջև գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք: Մանկավարժական այս մոտեցումը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնողականություն:

Իհարկե, կարևոր են նաև նորարարական մոտեցումները, որոնք անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Սակայն նշենք նաև, որ չենք բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը՝ հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը, որոնք այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Այսպիսով, աներկբա է, որ ժամանակակից կրթության առանցքային հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող սերնդի ձևավորումը: Հենց այս կարողությունների ձևավորմամբ է պայմանավորված մարդկության առաջընթացը, որն այսօր աննախադեպ կերպով շոշափելի է դարձել:

## **1.2 Նախագծային ուսուցման դերը սովորողների կարողունակությունների զարգացման հարցում**

Ընդհանուր առմամբ նախագծային ուսուցումը կարելի է դիտարկել որպես դիդակտիկ համակարգ, իսկ նախագծային մեթոդը՝ որպես այդ համակարգի բաղադրիչ, որպես մանկավարժական տեխնոլոգիա, որը ներառում է ոչ միայն գիտելիքների ինտեգրումը, այլև գիտելիքների կիրառումը, նորերի ձեռքբերումը:

Նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է: Որպես նախագծային մեթոդի վերջնարդյունք՝ կարելի է համարել սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, ՏՀՏ-ում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուլիի կողմից առաջ քաշած մանկավարժական հասկացությունները, ով դրանք գործնականում կիրառել է Չիկագոյի փորձարարական լաբորատոր դպրոցում 1896 – 1904 թվականներին: Ջ. Դյուլին կարծում էր, որ դպրոցի բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն սովորողի մտածողության ձևավորմանը, որը հիմնված է անձնական փորձառության վրա: Ըստ Դյուլիի՝ մեթոդը տալիս էր այնպիսի պայմաններ, որոնք հարմարեցված էին անհատական կարիքներին և կարողություններին, ինչպես նաև կարող էր

ապահովել դիտարկման, ներկայացման, հետազոտության, գաղափարների մշտական զարգացման համար համապատասխան պայմաններ<sup>5</sup>:

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ, ավելին՝ մեթոդի արդյունավետությունն ու կառուցվածքը բավականաչափ ուսումնասիրված է: Վերջին տասնամյակներում նախագծային մեթոդի ներդրումը մի շարք առաջավոր երկրների կրթական համակարգերում, գալիս է փաստելու, որ նախագծային ուսուցման գերխնդիրն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման ընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց հավաքագրում և կիրառելու պատրաստակամություն: Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

- Ռեֆլեկտիվ հմտություններ;
- Որոնողական, հետազոտական հմտություններ;
- Համագործակցային հմտություններ;
- Կառավարման կարողություններ, հմտություններ;
- Շնորհանդեսների պատրաստման հմտություններ;
- Ներկայացման հմտություններ:

Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մեթոդներից այն է, որ հնարավորություն է տալիս սովորողների մոտ մեկ աշխատանքային գործունեության ընթացքում միանգամից զարգացնել համալիր կարողունակություններ:

Այս աշխատանքը սովորողին տալիս է մի շարք առավելություններ, դրանք են՝

- սովորողի հետաքրքրությունների շրջանակի բացահայտում,
- սովորողի գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառություն,
- ինքնուրույնություն,
- ստեղծարար մտածելու և գործելու կարողություն
- արդյունքի ներկայացում,

<sup>5</sup> Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013, стр.8

- Նախագծելու, համակարգելու կարողություն,
- ՏՀՏ կիրառելու կարողություն,
- կոլեկտիվ աշխատելու ունակություն:

Նախագծային գործունեության նախագծումը բավականին աշխատատար ընթացք է, ունի հստակ փուլեր, դրանք են՝

- Թեմայի կամ գործունեության ընտրություն
- Աշխատանքի պլանավորում
- Տեղեկատվական հոսքերի կառավարում
- Գործընթացի կազմակերպում
- Գործընթացի իրականացում
- Արդյունքների ցուցադրություն

Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար: Նախագծային մեթոդն ադապտիվ է. կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն կարելի է կիրառել նաև արտադասարանային եղանակով, որտեղ սովորողը, որպես կանոն, էլ ավելի ազատ ու անկաշկանդ է:

Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է. սովորողներն իրենց ուսուցչին դերային մոդել են համարում: Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահանջվում: Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար<sup>6</sup>:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ թիմային աշխատանքի ժամանակ սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց, սովորում ու սովորեցնում են իրար: Վերջիններիս մոտ ամրակայվում է կոլեկտիվ աշխատանքի գաղափարը, մեկտեղ աշխատելու, սովորելու, ուսումնասիրելու ու հետազոտելու ընթացքում սովորողների մոտ

<sup>6</sup> <http://boon.am/learning/> Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին):

բարձրանում է պատասխանատվության զգացումը, սեփական ներդրումն ունենալու ձգտումը:

Այսպիսով, սովորողները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը: Պաշտպանությունը աշխատանքի վերջնական արդյունքն է, որը կարող է լինել ցանկացած բնույթի՝ կախված սովորողի ստեղծագործ մոտեցումից: Ուսուցիչը լսում է, սովորողներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը: Սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը:

Նախագծային ուսուցման կիրառությունը սովորողին հնարավորություն է տալիս համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները: Այս տարիքային խմբի սովորողների մոտ հաճախ հանդիպում է անկանոն վարք, սովորելու նկատմամբ անտարբերություն, հետաքրքրության բացակայություն: Յենց նմանօրինակ խնդիրներով էլ պայմանավորված է կրթական համակարգում առկա բացթողումները, որոնք, անշուշտ, պահանջում են շուտափույթ լուծումներ: Կարծում ենք, որ լուծումներից մեկն էլ հենց նախագծային մեթոդի ներդրումն է ՀՀ կրթական համակարգում:

Այնուամենայնիվ, սովորողի հետաքրքրությունը մեծացնելու, դասի մեջ լիարժեք ներգրավելու հարցում առանցքային դերակատարում ունի ուսուցիչը, ով պետք է շատ նրբորեն մոտենա սովորողների՝ հաշվի առնելով սեռատարիքային դրսևորումներով պայմանավորված առանձնահատկությունները: Առաջադրանքների բազմազանությունն սովորողներին հնարավորություն է տալիս դրանց մասնակցելու տարբեր ձևերով: Նրանք կարող են աշխատանքի իրենց բաժինն ընտրել ըստ իրենց նախկին փորձի, ունակությունների և հավակնությունների՝ առանց ուսուցչի կողմից որևէ մեթոդաբանության կիրառման: Նախագծային մեթոդն առաջարկում է ավելին, քան ավանդական կրթության և դպրոցի շրջանակը: Այն կենտրոնանում է առօրյա կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների փորձառությունը:

Ազատ դաստիարակության գաղափարից ծնվելով՝ ներկայումս նախագծային ուսուցման տեխնոլոգիան վերածվել է մշակված և կառուցվածքային հստակ

բաղադրիչներով տեխնոլոգիայի, որի էությունը նույնն է մտում խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է համալիր գիտելիքների տիրապետում, կանխատեսել այդ խնդիրների լուծումը նախագծային գործունեությամբ, զարգացնել ստացած գիտելիքների գործնական կիրառման ունակություն, քննադատական մտածողություն: Նախագծային տեխնոլոգիան միավորում է գիրք կարդալու ու զանազան տեղեկատվական աղբյուրներից օգտվելու գործընթացները:

Այս տեխնոլոգիան դիտարկվում է որպես սովորողակենտրոն ուսուցման մի տարբերակ, որն էապես բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը և սովորողների մոտիվացվածությունը: Թեև սովորողների մեծ մասը հակված է կարճաժամկետ կամ միջնաժամկետ նախագծեր իրականացնելու, հարկ է նկատել, որ առավել արդյունավետ են գիտական մտածողություն ձևավորող երկարաժամկետ նախագծերը: Տեխնոլոգիայի արդյունավետ կիրառումը նպատակահարմար է նաև միջառարկայական կապերի համատեքստում<sup>7</sup>:

Այսպիսով, աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը:

---

<sup>7</sup> Պատմությունն. մշակույթ, Հայագիտական հանդես, 2021, Մ. Հովհաննիսյան «Նախագծային ուսուցման առանձնահատկությունները», էջ 185:

### **1.3 Նախագծային աշխատանքի օրինակ «Գրականություն» առարկայի դասավանդման շրջանակներում**

Դիտարկենք նախագծային մեթոդի կիրառությամբ աշխատանքի օրինակ «Գրականություն» առարկայի շրջանակներում: Նախագծային աշխատանքի իրականացման համար վերցրել ենք 12-րդ դասարանի «Գրականություն» առարկայից ծրագրային նյութ՝ «Օտարագիր գրողները»՝ մասնավորապես անդրադառնալով Շառլ Ազնավուրին: Աշխատանքի վերջնարդյունքում, համաձայն ուսուցչի կազմած պլանի, սովորողը պետք է իմանա՝

- Ազնավուրի կենսագրության մասին տեղեկություններ
- Ազնավուրը՝ գաղթականի սերունդ
- Ազնավուրը՝ հայրենասեր հայ
- Ազնավուրը՝ համաշխարհային նշանակության երգիչ
- Ազնավուրը՝ օտարագիր գրող
- Ազնավուրը՝ բարերար
- Ազնավուրը՝ Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնելու առաջամարտիկ
- Ազնավուրը՝ հայրենասիրության ու հայրենանվիրության խորհրդանիշ:

Այսպիսով, նախագծային աշխատանքի իրականացմանն ընդառաջ սովորողներ կայցելեն «Ազնավուր» կենտրոնը, որը գտնվում է Երևանում՝ Կասկադի բարձունքի վերին հատվածում: Այս այցելությունը անչափ կարևոր ու առարկայական մեկնարկ կդառնա նախագծային աշխատանքն իրականացնելու համար: Աշխատանքը կանվանենք «Շառլ Ազնավուրի հետքերով»:

Նախագծային աշխատանքի նպատակն է դուրս գալ դասագրքային նյութից, հավաքել տեղեկություններ մեծն հայի կյանքի, գործունեության, վաստակի մասին, Էլ



ավելի խորքային ուսումնասիրել վերջինիս գրական ժառանգությունը, հասկանալ նրա դերն ու կարևորությունը 20-րդ դասի ֆրանսիական ու համաշխարհային մշակույթի մեջ, ինչպես նաև կարևորել վերջինիս հայանպաստ գործունեությունը հայ ժողովրդին օգնելու և համաշխարհային քաղաքական թատերաբեմերում Յայաստանի դիրքերը բարելավելու առումով:

Աշխատանքն իրականացնելիս անպայման հաշվի ենք առել այլ առարկաների հետ ինտեգրումը: Անշուշտ, հետազոտության ընթացքում սովորողները առիթ կունենան կատարել պատմական ակնարկ՝ կապ ստեղծելով «Պատմություն» առարկայի հետ, ինչպես նաև վերջիններիս մեծապես կօգնեն «Ինֆորմատիկա» առարկայից ստաժաց գիտելիքները: Այս գիտելիքներն անկյունաքարային նշանակություն ունեն նախագծային աշխատանքի իրականացման համար, քանի որ տեղեկատվական հոսքերի հիմնական աղբյուրը սովորողների համար հենց համացանցային հարթակներն են: Սովորողներն ուսումնասիրության ժամանակ հնարավորություն կունենան առնչվել նաև «Աշխարհագրություն» և «Ֆրանսերեն» ուսումնական առարկաների հետ՝ հաշվի առնելով մեծն շանսոյեի կյանքն ու գործունեությունը:

Նախ և առաջ դասարանը կբաժանենք խմբերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է կատարի կոնկրետ հանձնարարություն: Այս կերպ խրախուսվում է սովորողների թիմային աշխատանքը, վերջիններս հասկանում են, որ իրենցից յուրաքանչյուրը պարտավոր է ամեն կերպ ունենալ մասնակցություն մեկ ընդհանուր նպատակի հասնելու համար: Նախագծային աշխատանքի նախապատրաստման համար կընտրենք մեկ ամիս ժամանակ, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան թիմային հետազոտություններ կատարել, ապա այդ ամենն արդյունքների և ներկայացնել: Որպես աշխատանքի վերջնական ներկայացման տարբերակ՝ ընտրվել է տեսահոլովակի, ցուցապաստառի և տեսասահիկի պատրաստումը: Կարող ենք ասել, որ աշխատանքը բավականաչափ կարող է նպաստել սովորողների ինքնուրույնությանը, առանց ուսուցչի օգնության տեղեկատվության մշակմանն ու համակարգմանը: Աշխատանքի իրականացմանը զուգընթաց՝ սովորողներն անկաշկանդ կարող են դրսևորել իրենց ստեղծագործականությունը, հանդես գան նոր գաղափարներով, լինեն նախաձեռնողի դերում՝ ամբարելով գիտելիքների ու կարողունակությունների համակողմանի պաշար:

Աշխատանքի իրականացման արդյունքում սովորողները ինքնուրույն հետազոտեցին առաջարկված թեման, ձեռք բերեցին համակողմանի գիտելիքներ Շառլ Անգլավուրի մասին, գիտելիքին զուգահեռ ամրապնդեցին մի շարք կարողունակություններ, սովորեցին աշխատել թիմում:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը: Արդյունքում սովորողը գործնականում կհասկանա, թե որքան կարևոր է սովորել, ինքնազարգանալ ու հավաքել անսահմանափակ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

Վստահաբար կարող ենք ասել, որ ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը ոչ միշտ է հանգեցնում այն վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով: Կարևոր ենք համարում Նախագծային ուսուցման հնարավորությունները, որի շրջանակներում սովորողն իրեն ապահով ու հանգիստ ՝ զգում, կարողանում է մոբիլիզացնել իր ողջ մտավոր ու ստեղծագործական ներուժը, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ: Ինչու չէ կարևոր է նաև բարոյահոգեբանական միջավայրը. յուրաքանչյուր սովորող պետք է աշխատանքի ընթացքում իրեն կարևոր զգա, հնարավորություն ունենա ինքնադրսևորվելու: Անշուշտ, մեր թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է կազմակերպի աշխատանքի ընթացքը, հաշվի առնի սովորողների անհատական պահանջմունքները:

Վերահաստատենք մեր այն պնդումը, որ Նախագծային աշխատանքը սովորողին մղում է մտածելու, ստեղծելու, համեմատելու, զուգահեռներ անցկացնելու: Սովորողը աշխատանքի ընթացքում դառնում է հետազոտող, բացահայտող, նորարար, ուստի այս աշխատանքները գրավիչ ու հետաքրքիր կարող են լինեն հենց սովորողների համար:

Լիահույս ենք, որ սույն հետազոտությունը խթան կհանդիսանա մեզ՝ ուսուցիչներիս համար մոտիվացվել դեպի նորը և մոտիվացնել սովորողին:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Սույն հետազոտության թեմայի ուսումնասիրության ընթացքում կատարեցինք մի շարք դիտարկումներ, արոնց մասին կխոսենք ստորև: Կարծում ենք, որ Նախագծային ուսուցումը Էականորեն կարող է բարձրացնել սովորողի մոտիվացիան, հետաքրքրությունը սովորելու նկատմամբ, իսկ դա կրթական համակարգի շարժիչ ուժն է: Սովորողի ինքնուրույնության, Նախաձեռնողականության բարձրացումը ենթադրում է վերջինիս աշխատունակության բարձրացում:

Նախագծային ուսուցումը, Նախագծային մեթոդի համընդհանուր կիառությունը թույլ կտա բարձրացնել սովորողի աշխատունակությունը, կօգնի սովորողներին տեսական ու գործնական բաղադրիչները արդյունավետ համակարգել, խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է տիրապետում համալիր գիտելիքների: Նախագծային մեթոդի ներդրումը կօգնի սովորողի համար կանխատեսելի դարձնել առաջարկվող խնդրի լուծումը Նախագծային գործունեությամբ: Այս համատեքստում կարևոր ենք համարում նաև ուսուցչի կարողունակությունների զարգացումը, ծանոթացումը մեթոդի առանձնահատկություններին ու կառուցվածքին: Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների և ուսուցիչների համար հասանելի դարձնել զանազան տեղեկատվական աղբյուրներից օգտվելու գործընթացները:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը: Արդյունքում սովորողը գործնականում կհասկանա, թե որքան կարևոր

Է սովորել, ինքնազարգանալ ու հավաքել անսահմանափակ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նշենք, որ այս հետազոտությունը Էապես նպաստեց նախագծային աշխատանքի, դրա կիրառման եղանակների մասին գիտելիք հավաքելու մեր ցանկությունը: Ուսումնասիրելով նախագծային աշխատանքի իրականացման առանձնահատկությունները, բերենք մի քանի առաջարկություններ՝

- Կարծում ենք նախագծային աշխատանքն առաջին հերթին օգնություն է ուսուցչին, ուստի դպրոցը պետք է ընդառաջ գնա և փորձի բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովել աշխատանքի արդյունավետ իրականացման համար:
- Կարելի է ամփոփիչ կամ կիսամյակային աշխատանքները փոխարինել նախագծային աշխատանքով, ինչը, կարծում ենք, բավականին արդյունավետ կլինի:
- Կարելի է իրականացնել նախագծային ինտեգրված աշխատանքներ մի քանի առարկաներից:
- Կարելի է դպրոցում կազմակերպել նախագծային աշխատանքների ցուցահանդեսներ, որոնք ավելի կխրախուսեն սովորողներին:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345>  
ՀՀ Հանրակրթության մասին օրենք:
2. [https://www.moj.am/storage/uploads/00.Ardir\\_6.pdf](https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf)  
Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013:
3. [http://www.zangak.am/pdf/mankavarj-2012\(3-4\).pdf](http://www.zangak.am/pdf/mankavarj-2012(3-4).pdf) Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
4. <http://boon.am/learning> Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շազաֆյան (Կրթությունն ամենուր և բոլորին)
5. Պատմությունն մշակույթ, Հայագիտական հանդես, Մ. Հովհաննիսյան «Նախագծային ուսուցման առանձնահատկությունները», Երևան, 2021:
6. <https://repo.nspu.ru/bitstream/nspu/654/1/metod-proektov-v-professionalnom.pdf> Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013.